Նախագծերի հայտամրցույթ 2025

Résidences Méditerranée
Կեցարանի ծրագիր
Մարսելի Ֆրիշ լա Բել դը Մե տարածքում

1 ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ԵՐԱԺԻՇՏ

(ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՄ ԻՆՍՏՐՈՒՄԵՆՏԱԼ)

Հայտամրցույթը հասցեագրված է հայ երաժիշտներին

Անցկացման ամսաթիվը՝ 2025թ.-ի հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 30-ը

Հայտերն ընդունվում են մինչև **2025թ.-ի հուլիսի 3-ը ներառյալ**

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2015 թ.-ից ի վեր Friche la Belle de Mai-ն (Ֆրիշ լա Բել դը Մե) և Մարոկկոյի ֆրանսիական ինստիտուտը նախաձեռնել են «Résidence Méditerranée» («Կեցարան Միջերկրական ծով») ծրագիրը: 2017թ. ծրագրին է միացել Ալժիրի ֆրանսիական ինստիտուտը, 2018-ին՝ Իրանում Ֆրանսիայի դեսպանությունը, 2020-ին՝ Եգիպտոսի ֆրանսիական ինստիտուտը, 2022-ին՝ Երուսաղեմի ֆրանսիական ինստիտուտը և Կամերունի ֆրանսիական ինստիտուտը և 2024 թվականից՝ Հայաստանի ֆրանսիական ինստիտուտը: Կեցարանի այս ծրագրի նպատակն է Մարսելում հյուրընկալել նորահայտ արվեստագետների Միջերկրական ծովի ողջ շրջակայքից՝ խրախուսելու համար վերջիններիս շարժունությունը: Ծրագիրն առաջարկում է յուրաքանչյուրի կարիքներին համապատասխանող հետազոտական և ստեղծարար միջավայր, որը հնարավորություն է տալիս զարգացնել մասնակիցների գեղարվեստական պրակտիկան և (վերա)բացահայտել ֆրանսիական արվեստագիտական թատերաբեմը:

> Ստեղծագործելու և առերեսվելու տարածք
Յուրաքանչյուր արվեստագետի հասնում է իր նախագծին և ստեղծելիք ձևերին համապատասխանող ստեղծագործական տարածք: Կեցարանի ողջ ընթացքում տրամադրվում է անհատականացված աջակցություն փորձագետ-խորհրդատուի ներգրավմամբ՝ ստեղծելով քննարկման և «քննադատության» պահեր, որոնք յուրաքանչյուր ստեղծագործողի խորհելու տեղիք կտան:

> Արվեստանոցները հանրության առջև բացելը, մասնագետների, արվեստաբանների և լրագրողների հետ հանդիպումները հեռանկարներ ու նոր համագործակցություններ կբացեն և կապահովեն ընթացիկ աշխատանքների տեսանելիությունը:

ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

Կեցարանի ծրագիրը կանցկացվի JEST փառատոնի շրջանակներում՝ AMI-ի (Օժանդակություն նորարարական երաժշտությանը) աջակցությամբ: Սա փորձարարական երաժշտությանը նվիրված խոշոր միջոցառում է, որը տեղի է ունենում նոյեմբերին:

JEST փառատոնը խոնարհաբար ծառայում է այն բոլոր ձայների պաշտպանությանը, որոնք վեր են հառնում, դիմադրում և ապրում՝ որքան հնարավոր է մոտ մարդու սրտին, առանց որևէ նախապայմանի: Դա պահանջում է ժամանակ, հավաքական նվիրվածություն, սեր, քրտնաջան աշխատանք և, իհարկե, տաղանդ:

Կեցարանը տեղի կունենա AMI-ի ամբողջությամբ հագեցած ստուդիաներում: Ծրագրի շրջանակներում AMI-ն կաջակցի այն երաժշտի նախագծին, ով արդեն իսկ ունի զգալի ստեղծագործական փորձ (ալբոմներ, կենդանի կատարումներ) և ցանկանում է զարգացնել իր ստեղծարար հմտությունները միջազգային համատեքստում:

ԸՆՏՐՎԵԼՈՒ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Հայտամրցույթին մասնակցելու համար՝ արվեստագետը պետք է.

- լինի ՀՀ քաղաքացի, աշխատի և բնակվի Հայաստանում,
- ավարտած լինի ակադեմիական ուսումը և/կամ կարողանա ցույց տալ առնվազն 3 տարվա մասնագիտական փորձ գեղարվեստական ոլորտում,
- ունենա ստեղծագործական նախագիծ/նախագծեր մշակելու փորձառություն,
- ունենա կեցարանի ծրագրից վերադառնալուց հետո 3 ամիս վավերականություն ունեցող արտոնագիր (վիզա):

Մեծապես խորհուրդ է տրվում պատվաստված լինել եվրոպական չափանիշներին համապատասխան:

Դիմորդները պետք է տիրապետեն ֆրանսերենին և/կամ անգլերենին:

ԿԵՑԱՐԱՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾԸ

Կեցարանի ժամանակաշրջանները հետևյալն են.

- Երաժշտություն՝ 2025թ. հոկտեմբերի 19-ից նոյեմբերի 30-ը:

ԿԵՑԱՐԱՆՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՎԵԼՈՒ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

- Արվեստագետներն իրավունք ունեն օգտվելու Friche la Belle de Mai-ի տարածքում գտնվող **սենյակից** և **աշխատանքային տարածքից**: Friche la Belle de Mai-ի հատկացրած առանձնատունն ունի 20 սենյակ, լոգասենյակներ, ընդհանուր խոհանոցային տարածք և ճաշասենյակ:

- **Փորձագետ-խորհրդատուն** նշանակվում է՝ ելնելով արվեստագետի մասնագիտական ուղղվածությունից: Հայաստանի ֆրանսիական ինստիտուտը սահմանում է ստեղծագործելու դրամաշնորհ:

Երաժշտության ոլորտում որպես փորձագետ-խորհրդատու է սահմանվում AMI-ն:

- Մասնակիցների՝ Հայաստան-Ֆրանսիա **ուղևորության ծախսերը**, ինչպես նաև օրապահիկը հոգում է Հայաստանի ֆրանսիական ինստիտուտը:
- Կեցարանի ծրագրի ավարտին պետք է ներկայացնել հաշվետվություն:

Կեցարանի ծրագիրը ներառում է հետևյալ աջակցությունը.

- Ապրուստի դրամաշնորհ : 1164 եվրո /ամսական
- Ստեղծագործելու դրամաշնորհ : 2 500 եվրո
- Կացարանի տրամադրում
- Աշխատանքային տարածքի տրամադրում
- Ինքնաթիռի երկկողմանի տոմս
- Մուտքի արտոնագրի վճարներ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

- Հայտադիմումների ներկայացում՝ 05/06/2025թ.-ից մինչև 03/07/2025թ.-ը
- Արդյունքների հայտնում՝ 2025թ.-ի հուլիս

ԸՆՏՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

Հայաստանի ֆրանսիական ինստիտուտի, Friche la Belle de Mai-ի և «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության (KulturDialog Armenien) ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը կուսումնասիրի հայտադիմումներն ամբողջությամբ և կընտրի ծրագրի հաղթողին:

Բացի դիմորդի անցած մասնագիտական ուղին գնահատելուց, ժյուրիի անդամները առանձնակի ուշադրություն կդարձնեն նախագծի գեղարվեստական որակին, Մարսելում կեցարանի հեռանկարի ընձեռած կարևորության փաստարկին, նախատեսվող աշխատանքի ընթացակարգին և արդեն հաստատված կապերին կամ գործընկերություններին:

ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Հայտադիմումի փաթեթը պետք է ներառի.
- պատշաճ լրացված առցանց ձևաթուղթը: Այն պետք է լրացնել ֆրանսերեն կամ անգլերեն՝ սույն հարթակում՝ https://bit.ly/43Nq3R6
- pdf ձևաչափով առավելագույնը 10 էջ պարունակող տեքստ՝ Ձեր աշխատանքի նպատակները հասկանալու համար, որտեղ կարող եք կցել Vimeo, YouTube և այլ հղումներ,
- ամբողջական ինքնակենսագրական (CV)՝ առավելագույնը 3 էջ, PDF ձևաչափով,
- մոտիվացիոն նամակ, որտեղ հստակ կնշեք Ձեր հասանելիությունը նշված ժամանակահատվածում և նախագծի նկարագիր՝ հաշվի առնելով «Հայտադիմումների համատեքստը» (առավելագույնը 15 էջ՝ PDF ձևաչափով):

Հայտադիմումների փաթեթը պետք է ուղարկել հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ residence@institutfrancais.am

Նախագծի հայտամրցույթի փակումից հետո ստացված հայտադիմումները քննության չեն առնվի:

Թղթային տարբերակով հայտադիմումները չեն ընդունվում:

LA FRICHE LA BELLE DE MAI (ՖՐԻՇ ԼԱ ԲԵԼ ԴԸ ՄԵ)

Մեր օրերում «Երրորդ տեղ» (« Tiers-Lieux ») կոչվող մշակութային և քաղաքային նոր մոդելների նախատիպը՝ Friche-ը, որ ստեղծվել է 1992թ.-ին, եզակի ու նորացված վայրում միավորում է քաղաքային վերափոխումը, գեղարվեստական մշտականությունը, կապը տվյալ շրջանի հետ և հանրօգուտ ակտիվ համագործակցությունը:

Սկիզբ առնելով նախկին Սետա գործարանից և այսօր հանդիսանալով ստեղծարարության և նորարարության վայր՝ Friche la Belle de Mai-ն և՛ աշխատանքային տարածք է իր 70 անդամ կառույցների համար (350 արվեստագետ, ստեղծագործող, աշխատող ամենօրյա ռեժիմով աշխատում է այստեղ), և՛ արվեստի տարածման վայր է (տարեկան 600 գեղարվեստական առաջարկ է արվում հանրությանը՝ սկսած մանկապատանեկան աշխատարաններից մինչև խոշորագույն փառատոններ): Ունենալով տարեկան մոտ 450 000 այցելու՝ Friche la Belle de Mai-ն 45 000 մ2 մակերեսով համապարփակ հանրային տարածք է, ուր կողք կողքի հանդիպում են ներկայացումների և համերգների 5 սրահ, հանրային այգիներ, խաղային և սպորտային տարածք, ռեստորան, գրախանութ, մսուր-մանկապարտեզ, 2400 մ2 մակերեսով ցուցասրահ, 8000 մ2 մակերեսով տանիքային բացօթյա պատշգամբ, ուսումնական կենտրոն:

https://www.lafriche.org

ԳՈՐԾԸՆԿԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

2022թ.-ին ստեղծված Հայաստանի ֆրանսիական ինստիտուտը Ֆրանսիայի դեսպանության լեզվական, համալսարանական և մշակութային քաղաքականությունը վարող բաժինն է:

Ինստիտուտը սերտորեն համագործակցում է Հայաստանում ֆրանսիական ցանցի այլ դերակատարների՝ ՀՖՀՀ-ի և Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական կրթահամալիրի հետ:

Ինստիտուտն իր գործունեությունը հայ հանրության համար սկսել է 2023թ. հետևյալ երեք ուղղություններով.

-լեզվի կենտրոն (ընդհանուր ֆրանսերենի խմբակային և անհատական, ինչպես նաև մասնագիտական ֆրանսերենի դասընթացներ բոլոր մակարդակներում չափահասների և երեխաների համար) և վկայագրերի կենտրոն (DELF/DALF, TCF),

-Campus France (Կամպուս Ֆրանս) տարածք, որը կոչված է ուղղորդելու հայ ուսանողներին իրենց ուսումը Ֆրանսիայում շարունակելու գործում,

-մշակութային բաժին, որը զբաղվում է բազմագիտակարգային գեղարվեստական ծրագիր կազմելու, այն իրագործելու հարցերով և քննարկումներ կազմակերպելով: Մշակութային ծրագիրը կազմվում է տեղական դերակատարների (ԿԳՄՍ նախարարություն, տեղական ինքնակառավարման մարմիններ, մշակութային վայրեր, փառատոններ, համալսարաններ) հետ գործընկերությամբ՝ շեշտը դնելով ժամանակակից ստեղծարարության և ֆրանս-հայկական համագործակցության վրա:

ԳՈՐԾԸՆԿԵՐ «ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (KULTURDIALOG ARMENIEN)

«Մշակույթների երկխոսություն»-ը մշակութային միություն է, որը հիմնել է արվեստի պատմաբան (M.A.) Սոնա Հարությունյանը 2012թ. հունիսի 15-ին Երևանում: Կազմակերպության նպատակն է խրախուսել մշակութային փոխանակումներն ու երկխոսություն հաստատել հայ և օտարազգի արվեստագետների միջև: «Մշակույթների երկխոսություն» կազմակերպությունն իր լսարանին հանդիպման է հրավիրում գեղարվեստական նոր հեռանկարների հետ: «Մշակույթների երկխոսություն» կազմակերպությունը ազգային և միջազգային հարթակներում ցուցադրությունների, կեցարանի և համագործակցության տարբեր նախագծերի աջակցող իր գործունեությամբ ձգտում է նոր հնարավորություններ ստեղծել աջակցություն ստացած արվեստագետների համար:

ԳՈՐԾԸՆԿԵՐ
L'AMI – ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆԸ

1985 թ.-ից ի վեր L'AMI-ն մշակում է գեղարվեստական նախագծեր տեղի բնակիչների, արվեստագետների և մշակույթի ոլորտի գործարարների համար: Մշակութային ընկերությունների, ինչպես նաև սկսնակ և անկախ արվեստագետների հետ հաղորդակցվելու, նրանց նույնականացնելու և աջակցելու շուրջ ծավալվող նրա գործունեությունը կարևոր գործիք է տարածաշրջանի կարևոր դերակատարումն ապահովելու տեսանկյունից՝ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային մակարդակով գեղարվեստական ստեղծագործականության առումով: Իր կողմից առաջ մղվող մի շարք արժեքների միջոցով AMI-ն ձգտում է ակտիվ դեր խաղալ կայուն, մշակութային և նորարարական զարգացման բազա ստեղծելու գործում: AMI-ն իր մեջ կրում է համագործակցային մի իրական մշակույթ, որը խրախուսում է բազմամասնագիտական համագործակցությունը բոլոր մակարդակներում: Հենվելով իր պատմության և ոլորտի դերակատարների օրեցօր աճող քանակի վրա՝ AMI-ն պաշտպանում է երաժշտական նորարարության, ժանրային դասակարգումից զերծ գեղագիտական հիբրիդացման և միջգիտակարգային մոտեցումների վրա հիմնված գեղարվեստական գիծ՝ մնալով գեղարվեստական և մշակութային բազմազանության պաշտպանության գործում հիմնական դերակատար:

Հաստատությունը գործունեություն է ծավալում հետևյալ հինգ ուղղություններով՝

1. ԴԻՆԱՄՈ ՀԱՐԹԱԿ - Աջակցություն մշակութային ձեռներեցությանը. նախագծի համայնքի ձևավորում (բիզնես ինկուբատոր, համատեղ աշխատանք, խորհրդատվություն և ուսուցում, կապերի հաստատում և միջազգայնացում):
2. ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ՓՈՐՁԵՐ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՃ և ՆԵՐԳՐԱՎՈՒՄ - Աջակցության ծրագիր՝ ծառայությունների մշակումից և նախնական արտադրությունից մինչև կապերի ստեղծում (մասնագիտական ուսուցում, ուղղորդում և տեխնիկական աջակցություն):
3. ԿԵՑԱՐԱՆՆԵՐ ԵՎ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ - Գործիքներ, մասնագետների ցանց և գեղարվեստական փորձագիտություն՝ տաղանդի և ստեղծագործականության զարգացմանը նպաստելու համար: Պատվերներ և համատեղ արտադրություններ, ստեղծագործական աջակցություն (ռեժիսուրա, բեմանկարչություն, տեխնիկական մշակում), եվրոպական և միջազգային համագործակցություն:

4. ԾՐԱԳԻՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ - Իր գեղարվեստական ուղու աջակցության և պաշտպանության գործընթացը տեսանելի դարձնելու համար՝ հանրության հետ նորարարական հանդիպումների համար շրջանակ առաջարկելով (համատեղ արտադրություններ, համերգներ և փառատոններ՝ HIP HOP SOCIETY & JEST):
5. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ և ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ - Գեղարվեստական պրակտիկայի, ստեղծագործականության և հարակից մասնագիտությունների հետ կապերի խրախուսում՝ վաղվա օրվա արվեստագետներ կրթելու համար (արվեստանոցներ, գիտելիքի փոխանցում, գեղարվեստական և մշակութային կրթություն):

https://www.amicentre.biz/